ՆՈՐ-ԴԱՐ

№ 214 ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 16 Դեկտեմբերի 1886 Երեքշաբթի 16 Դեկտեմբերի ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 214

Տարեկան 10 րուբլի, վեց ամսոք՝ 6 րուբլի, երեք ամսոք՝ 3 ր. 50 կ.
Հատով՝ 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ՀԱՑՈՑ ՄԻԱԿ ԱՄԵՆՕՐԵԱՑ ԹԵՐԹ

ԹԻՓԼԻՍՈՒՄ

ԱՌԱՋԻԿԱՑ 1887 ԹՈՒԱԿԱՆԻՆ

(Չորրորդ տարի)

Կը հրապարակուի նոյն չափով և ծրագրով

Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուան՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպ.
Եւրոպայի և Փերքիայի բաժանորդները վճարում են 30 Ֆրանկ։
Բաժանորդ են գրվում իւրաքանչիւր ամսի 1-ից։
Թիֆլիսում բաժանորդ են գրվում Ղևոնեան «Նոր-Դար»-ի խմբագրատանը։
Խմբագրատունը գտնվում է պօստատան հանդէպ, Տրօյիցկայա փողոցի վերայ, Սամեթա (Տրօյցկայա) եկեղեցու հանդէպ, տուն № 9։
Օտար քաղաքներից գիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis (Caucase) Rédaction «Nor-Dar».

Подписка единственной ежедневной армянской газеты «НОРЪ-ДАРЪ» принимается исключительно въ конторѣ Редакціи, Тифлисъ, въ центрѣ города, за Почтой а Тройцкомъ переулкѣ, въ домѣ № 9.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն. — Լուրեր։ Սալիանից Լջմիածին (չարունակ.)։
Թղթակցութիւններ.—Կ. Պօլիս։
Քաղաքական.—Լուրեր։
Խառն լուրեր
«Նոր-Դար»-ի հեռագրները
«Նոր Դար»-ի պատասխանները։
Բանասիրական.—Ջ'հաս է (չարունակ.)։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Հինգշաբթի, դեկտեմբերի 11-ին, Լերմօնտովի «Դիմակահանդէս»-ի վոլտաբէն հայոց դրամատիկական ակումբի խումբը անպատրաստի խաղաց Սունդուկեանցի «Պէպօ» կօմեդիան։

Պիէսան յայտնի է թատրոն յաճախող հասարակութեան։ Դերասանները ընդհանրապէս վատ չխազային։ Պէպօի դերը կատարող պ. Չմշկեանը մինչև վերջը իւր դերը հաւասար կերպով տարաւ, բայց ընդհանրապէս նկատելի էր, որ նա գաղրած էր։ Զիմզիմովի դերը կատարող պ. Աւետեան իւր նեղ, զլխին չնստող չափոյով ամենևին ազատ նման չէր...

Պիէսայի առաւելութիւնների և պակասութիւնների վերայ չենք խօսում արդէն նրա համար, որովհետև այդ պիէսան Թիֆլիսի համար անգամ-հնացած է։

Այս առթիւ խորհուրդ կը տայինք մեր դերասաններին, որ քիչ լաց լինէին։ Այդքան լաց լինելն էլ անտանելի է։ Դերասանները պէտք է ցոյց տան թէ լաց են լինում, վշտացած են և ոչ թէ ճչտարիտ լաց լինին։ Բեմը դեղարուեստի տաճար է և ոչ թէ դալախանայ։

Մեր թատրոնական հեղինակներն էլ ուրան էլ որ բեմից լինելին պէտք է իմանան, որ բեմը կորցնում է իւր բարձրը և գեղեցիկ նշանակութիւնը, եթէ նա ներկայացնում է կեանքի անմեղ-նուիրեալները իւր բոլոր մերկութեամբ։ Ամենագեղեցիկ պալատն էլ ունի անտարակոյս արատներ, բայց ոչ մէկ փոքր ինչ ճաշակ ունեցող հեղինակ բեմից լինելու ձգտումով պալատի գեղեցիկ դահլիճները կամ մոմերը սրահները թողած՝ բեմի վերայ չի դուրս բերիլ արատները, արդարացնելով իրեն, թէ դա էլ կայ։

—

Պետական կալուածների մինիստրութեան գրութեան համաձայն, Պետական խորհուրդը Ռուսիայում երկրագործութեան, գիւղատնտեսութեան և արուեստների առաջադիմութեանը նպաստող ընկերութիւններին դրամական օժանդակութիւն նշանակելով, ի միջի այլոց «Կովկասի գիւղատնտեսական ընկերութեան» յատկացրել է 6,000 րուբլի։

—

Դեկտեմբերի 4-ին Օդեսայից ճանապարհ ընկաւ դէպի Կովկաս մի ֆրանսիական ընկերութեան դիրեկտոր, որ յանձն է առել Օչէմչիրի մօտերքը գտնուող Օղէմմուրզինան պրինցի անտառները չահեցնելուս Դիրեկտորը գնում է նախապատրաստական կարգադրութիւններ անելու՝ գործ սկսելու համար։ Ընկերութիւնը, որ անտառներից օգտուելու համար մի քանի միլիոններ է վճարել, անտառի բերքերը նախապէս պէտք է Օդեսա արտահանէ, որտեղից յետոյ պիտի ուղարկուին արտասահման։ Սուխումի մօտ, Օչէմչիրում, որ Րէվվարի ափումն է գտնվում, ընկերութիւնը մտադիր է չինելու նաւահանգիստ, ուր անտառային բերքերը պիտի բերուին երկաթուղային չարժական գծով։ Բնակները կտանեն բամբուկ, ուր «Одес. Лис.»-ի ասելով, ընկերութիւնը իւր յատուկ նաւերն է ունենալու, չինելու է և տախտակի գործարան և այլն։ Մի խօսքով գործը մեծ չափերով է ըսկսուելու։

—

ՐՕՍՏՕՎԻՑ (Դոնի վերայ)։—Նոյեմբերի 28-ին մի քանի չորս-ամեայ հայ երիտասարդ Առաք. Արզ. Ազիզեանց անունով, ինքնասպանութեան փորձ արեց։ Դա մի առոյգ, ուժեղ երիտասարդ էր և Րօստովում մրգավաճառութեամբ էր պարապում։ Ինքնասպանութեան փորձի պատճառը համարվում է նրա ընտանեկան անընդհատ կռիւները իւր մեծ եղբօր հետ, որին չդիմանալով, վերջապէս վերոյիշեալ օրը գնալով խանութ, ատրճանակով խփում է իրեն և վիրաւորում կողքը։ Նրան իսկոյն տարան Րօստովի հիւանդանոցը, ուր մինչև այժմ մնում է անյուսալի դրութեան մէջ։

—

Շահվերդովի լրագրական գործակալութիւնը փակուած է նրա սեփ. Շահվերդովի մահուանից յետոյ։ Չեմ-բար նրանք, որոնք վերոյիշեալ գործակալութեան միջոցով լրագրերին փող են ուղարկում կամ մի որև է գործի համար դիմում են, պէտք է իմանան, որ փողը նշանակած տեղը չի հասնիլ և գործն էլ անկատար կը մնայ—գործակալութիւնը փակուած լինելու համար։

—

Իրկուտսկի քաղաքային խորհուրդը աշխատում է որ ա. չուտով բացուի Սիբիրի համալսարանը, ը. նրա մէջ ընդունեն հոգևոր սեմինարիաների ուսանողներին, ինչպէս որ այդ լինում է Վարշավի համալսարանում և վերջապէս գ. ինչպէս հաղորդում է «Н. В.»-ն, թոյլ տրուի այդ համալսարան ընդունելու Իրկուտսկի տեխնիկական ուսումնարանի աշակերտներին։

—

Մեր ընթերցողը երևի կարդացել է պրեմիա կոչուած Սահակ և Մեսրովբ պատկերների վերաբերութեամբ պ. Ա. Տէր-Ղևոնդեանի նամակը, որ մենք պարոնի յատուկ խնդրանքով հրատարակեցինք «Նոր-Դար»-ի անցեալ համարներից մէկում։ Պ. Ա. Տէր-Ղևոնդեանը այդ նամակում ի միջի այլոց գրում էր, թէ Սահակի և Մեսրովբի պատկերները փչացրած և վատ են։ Այժմս այդ առթիւ «Արձագանք» չաբաթաթերթը հետևեալ նկատողութիւնն է անում... «Մենք տեսանք պ. Նագարեանի պատրաստել տուած արծաթարտպատճէնները. տեսանք և լուսանկար Ա. Տէր Ղևոնդեանի պատկերը, որից գոքա ընդօրինակուած են, պ. Տիգրան Նագարեանի պատրաստել տուածները շատ անյաջող են. մինչև անգամ վատ են. պարթևազարմ ս. Սահակի փոխարէն, որ այնպէս վեհանձն և վսեմ դէմքով ձեւակերպուած է նկարել Ներսէսեանի վրձինը, պ. Նագարեանը տալիս է մեզ մի գզգզուած հերարձակ մալական։ Մեսրոպի պատկերի վերայ ևս չի երևում այն նուրբ ոգևորութիւնը, որի մէջ խորասուզուած է նա առաքելի ստեղծագործութեան րոպէին. չկայ այն երկինային լոյսը, այն բարձրագոյն աջը, որ օդի մէջ գծագրում է հայկական այբուբենի պահաս տառերը»։

—

Վերջին տարիներս Թիֆլիսում բազմացել են հրէաները. այժմ արդէն քաղաքիս որ կողմը, որ փողոցը չուռ գաք՝ հրէաների խանութներ կը տեսնէք և հրէաների կը հանդիպէք, որ ամեն տեսակ ապրանք ծախու հանած վաճառում են։

Ներեւսում էլ Կովկաս հիւրանոցի տակ մի նորակ հրէայ վաճառական «Բաղար» անունով մի խանութ է բաց արել և գլուխգլխի ապրանք է ծախում։

Զարմանալին այն չէ, որ մի առևտրական այն էլ հրէայ ապրանք է ծախում, զարմանալին հրէայ առևտրականի քաջութիւնն է, որ ապրանքը ցնոփնով է ծախում։ Աւելի նոր զարմանում, երբ մտածում ենք, որ հրէայ առևտրականի վերայ այդ ապրանքը պէտք է որ աւելի մանկ ընտած լինի, որովհետև ապրանքը նախ առացուել է Բաթումում ծախս անելու համար։ Ուրեմն հրէան ապրանքը ծախելու համար ստիպուած է եղել ամենից առաջ ծանօթանալ գնողների հետ, ուսումնասիրել նրանց ճաշակը, ինչ տեսակ ապրանք է պէտք նրանց, ինչ գնով և ինչ պայմանով։ Ուրեմն հրէան ամենից առաջ ծանօթացել է գնողների հետ, ուսումնասիրել է

Ա. Ա. Ա.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(Շահախոսական մեկ)

Վերջին մեր ամսագրի մեկ գլխավոր հոդվածում մենք ցույց տվինք, թե ինչպես Ռուսաստանի կառավարությունը, որ ամենից առաջ ուզում է ամեն ազգի մեջ ռուսական ոգի տարածել, ամեն կերպով ձգտում է ռուսերենը մտցնել ամեն տեղ, ուր ռուսերեն չգիտեն, ինչպես նա ամեն կերպով ձգտում է ռուսական սովորություններ, ռուսական կարգեր մտցնել ամեն տեղ, ուր ռուսական կարգեր չկան։ Ցույց տվինք, թե

լորովին այլ կերպարանք կառնեն։ Ֆրանսիան արդէն պատրաստ է վքճառղական միջոցին մրանալու Ռուսիային. իսկ Անգլիան, Սալսբիւրիի մինիստրութեան միջոցին մեծ ազդեցութիւն է ձեռք բերել Աւստրիա Ունգարիայում։ Միևնոյն ժամանակ նա Սուլթանին կարող է, թէ Եւրոպայում և թէ Ափրիկայում, աւելի տալ՝ քան այդ կարող էր անել Ֆրանսիան։

—Լոնդոնից հեռագրում են «Нов.»-ին, «Անգլիական կառավարութիւնը վճռել է փակելու իրլանդական ազգային միութիւնը։ Դիլլոնը և իրլանդական խնդրի նչանաւոր յուզողները դատի են մատնուած։

—Ինչպէս յայտնի է, Ֆրանսիայում Ֆրէյսինէի կաբինէն ընկնելով, նրա տեղ կազմուեցաւ Գօբլէի կաբինէն։ Նոր մինիստրութիւնը կազմակերպուելով՝ իսկոյն պատգամաւորներին ժողովին ներկայացրեց իւր ծրագիրը—որից սակայն դժգոհ մնացին պատգամաւորները. բայց և այնպէս տեսնելով, որ ներկայ հանգամանքում դժուար է աւելի լաւ մինիստրութիւն կազմել, պատգամաւորները 258 ձայնով 12-ի դէմ քուէարկեցին նոր մինիստրութեան պահանջած ժամանակաւոր բիւջէին և ընդունեցին. Այդ բիւջէն հասնում է 545,203,236 ֆրանկի։

—«Нови Београдскій Дневникъ»-ը հաղորդում է, որ սուլթանը չէ ընդունել Սերբիայի թագաւոր Միլանի ուղարկած Սպիտակ Արծուի մեծ անանկուճախչը։ Այս էլ վերագրում են կ. Պօլսի ռուս. դեսպ. Նելիդովի արարքին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նոր մուզէում.—Գերմանիայում աւելանում է էլի մի մուզէում, որ կրում է «Ոզնիների մուզէում» անունը. այդտեղ պիտի հաւաքուին մօտերքս վախճանուած մեկներ կաբլ Ոզնիներից ճեացած բոլոր թանկագին իրերը, պատկերները, հին գրքերը և այլն և այլն. նոյնպէս էլ այն ամենը, ինչ որ Ոզնիների ցեղին է վերաբերում։ Մուզէումը պիտի հաստատուի Ֆրանկֆուրտում-Մայնի վերայ, մի առանձին, փառաւոր չինութեան մէջ։

***

Հակայկին.—Այժմ Լոնդոնում իւր այժի փորձերն է անում մի հրաշայկին, միստր Ռօբինսոնը, որ մի ժամանակ Իրլանդիայում հացագործութեամբ էր պարապում։ Այս կինը, ճշմարիտ որ զարմանալի այժ ունի և դուրս է գալիս 4 ամենաուժեղ տղամարդիկների դէմ։ Միստր Ռօբինսոնի այժի փորձերը այժմ Լոնդոնում մօտաս է դարձել, բոլորը գնում են այդ զարմանալի կնոջ այժի փորձերը տեսնելու։

***

Ցարպէ առուն. Ներկայումս Ֆիլադելֆիայում (հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգներում) չինում են մի յարդէ առուն, որ մտադիր են ուղարկելու Լոնդոնի ցուցահանդէսին։ Ամբողջ առուն չինուած կը լինի եղերք յարկից և ատն բոլոր նիւթերը կը լինին միայն յարդից, ինչպէս օրինակ կամարները, հիմքը, տանիքը, և այլն ինչպէս և բոլոր տան միջի կահ-կարասիքը, զարդարանքները և այլն։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՈՐՇԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 Դեկտեմբերի

ՄՕՍԿՎԱ. Բրօնցկի բանկի գործի համար դատուղներից Տօմկեվիչը և Մատինօվ ճանաչուած են մեղապարտ. վերջինիս գիմումիչն է շնորհուած։ Դատարանը վճռեց երկու մեղադրուողներին էլ զրկել ամեն տեսակ առանձին իրաւունքներից և առաքելութիւններից, Մատինօվին ուղարկել 2 տարի 4 ամսով աւազակային ուղղիչ խումբը, իսկ Տօմկովիչին բնակութեան համար ուղարկել Տօմսկի նահանգը։

ՏՈՇԿԵՆՏ. Զարջոլից Սմբղանդ երկաթուղու գծի շինութիւնը կը սկսուի փետրվարին։

ԼՕՆԴՕՆ. Տօրիների խումբը պահպանում է Զիբչիլի հրաժարականը, որին հանգամանքները չեն արդարացնում։ Մարքիզ Սալսբիւրին ազատամիտ Հարտինգտոնին է մինիստրութեան հրաւիրում։

«Morning Post» ասում է, որ եթէ Անգլիան համաձայնութիւն է կայացրել Գերմանիայի, Աւստրիայի և Իտալիայի հետ, դա միմիայն Եւրոպայում խաղաղութիւնը պահպանելու դիտմամբ է եղած։ Այդ նախագիծը չյաջողուեց, որովհետև Թիւրքիան ռուսական քաղաքականութեան սկսաւ հետևել։

ԿԵՕԼՆ. Բառոնեմբերգեան Ալեքսանդր իշխանը երէկ, Լոնդոնից վերադառնալով, հասաւ այստեղ իւր հօր և եղբօր հետ։ Բօլղարական պատգամաւորները տեսնուեցան նրա հետ։

ՍԻՍՏՕՎՕ. Ամպամբները կերպակի և երկուշաբթի աշխատեցին տիրել օսմիկանական վարչութեան, քաղաքապետութեան և հեռագրատունը՝ բայց անյաջող։ Շատերը կալանաւորուած են։ Գլխաւոր դատավիր պատգամաւոր Անեվը ուղարկուած է Բուշչուկ։

13 Դեկտեմբերի

ԿԵՕԼՆ. Բօլղարական պատգամաւորութիւնը Բառոնեմբերգեան իշխանին տեսակցելուց յետոյ ուղեւորուեց դէպի Լոնդոն։

ԼԻՍՍԱՏՕՆ. Բրիտանական «Sultan» զրահակիր նաւը զարնուելով Ֆրանսիական «Wille Victoria» նաւին, չրասուզեց վերջինին. այդ միջոցին 60 հոգի խեղդուեցան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Կիեվի համալսարանի պրօֆէսսոր Անտոնովիչին թոյլ է տրուած Կիեվում „Кіевское Слово» անունով շաբաթաթերթ հրատարակելու։

ՎԵՆՆԱ. «Tageblatt» լրագրում Զեմլինից մի հեռագիր է տպուած, որի մէջ իբր լուր հաղորդուած է, որ վերջի օրերս Սերբիայի, Բօլղարիայի և Ռումինիայի մէջ պատերազմական և յարձակողական դաշնակցութիւն կապելու համար նախապատրաստական բանակցութիւններ են տեղի ունեցել։ Հեռագրի ասելով, Սերբիայի և Բօլղարիայի մէջ կայացել է արդէն կատարեալ միութիւն, և համաձայնութիւնը կատարուած, վերջացած կամ վերջանալու մօտ պէտք է համարել։ Ինչ վերաբերում է Ռումինիային, նա բոլոր է ակն կիսերում յայտնել է իւր համաձայնութիւնը։

Միևնոյն լրագրին Բուդա-Պեշտից հեռագրում են, որ ահա քանի ամիս է արդէն, որ աշխատում են գրաւի պեաչեվիչին Բօլղարիայի իշխան ընտրելու մասին։ Լրագիրը մէջ է բերում Պեաչեվիչի ցեղագրութիւնը, որից երևում է, որ նա ծագում է բօլղարական թագաւորներից։

15 Դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Շաքարագործատանատէրերի անցեալ շրջանի անվճար թողած տուրքերը ապահովացնելու համար, Ֆինանսների մինիստրը ակցիզի ատեճանաւորներին ուղղած ձանուցագրի մէջ ցոյց է տալիս, որ թէև անցեալ տարուայ ակցիզի գումարի երկրորդ կէսը վճարելու համար ժամանակ նշանակուած է մինչի 1887-ի մարտի 1-ը, բայց և այնպէս այդ ակցիզը դեռ անվճար է մնում, ուստի հարկաւոր է տեղական նահանգական դատարանների ատագ նստարաններին հաղորդել, որ ամեն մի շաքարագործարանի անվճար թողած ակցիզի մասին, որպէս զի գործարանի վաճառման հաստատագիրը տալիս, կամ կալուածքը գրաւ գնելու գործողութեան միջոցին անվճար ակցիզը իւր տոկոսներով վճարուի գանձարանին և կամ փոխանցուի նոր գործարանատիրոջ վերայ։

Հրէաների հաստատ բնակութիւն ունեցած տեղերում հրէաներից հարկապահանջական հաստատութիւններում պաշտօնակատար անդամ ընտրելու հարցի վերաբերմամբ սենատը որոշեց, որ ընտրութիւնները անելուց յետոյ, երևայ, որ ոչ-քրիստոնեաները աւելի են քան թէ թոյլ է տալիս օրէնքը, այսինքն $^1/_3$-ից աւելի, աւելորդ ընտրուած ոչ-քրիստոնեաներին, պիտի փոխարինեն քրիստոնեաներից կանդիդատները, և միայն այն դէպքում, երբ քրիստոնեայ չի գտնուել, կարող են նոր ընտրութիւններ կատարուիլ։

ՅՈՒՐԹԵՎՕ. Չնայելով որ տպրատամբութեան գլխաւոր դրդիչները կալանաւորուած են, Սիսատովն պաշարողական դրութեան մէջ է հրատարակուած. սակայն անկարգութիւնները շարունակւում են։ Մեծ միջոցներ են գործ դնում խռովութիւնը ճնշելու համար։

ՊԱՐԻԶ. «Փրկութեան ընկերութեան»անդամներին վարձատրութիւն բաժանելու միջոցին, պատերազմական մինիստր Բուլանժէն ճառ խօսեց, որի մէջ մատնացոյց արեց, որ այդ ընկերութիւնների անդամները զինուորականներին հակառակ, անարիւն գաղնիներ են հաւատքում և իրենց քաջագործութիւնները խաղաղ միջոցում են կատարում։ Այդ միջոցին Բուլանժէն յայտարարեց, որ խաղաղութեան պահպանութեան վերայ հոգում են բոլոր պետութիւնները, և նրանց կառավարիչները, այդ պատճառով էլ ետ չեն կենալ ոչ մի զոհեր անելուց, որ հակառակ չի լինել երկրի պատուին և ապահովութեան։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ատրպետեան. պ. Յ. Ս-ին։ «Նոր-Դար»-ի մէջ չափարերական աշխատութիւններ չեն հրատարակվում։ Չափարերական աշխատութիւնները, եթէ միայն տպագրութեան պիտանի են, ամսագրի մէջ կարելի է հրատարակել։

***

Նուխի. պ. Բ. Ռ-ին։ Սխալմամբ են պահանջել առանց մեր գիտութեան։ Եթէ «Նոր-Դար»-ը պահանջ է դարձել և այդ հասկանում են, պէտք է հասկանան և այն՝ որ թերթը առանց նիւթական ապահովութեան կարող չէ դոյութիւն ունենալ։

Խմբագիր-հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇՕԿՕԼԱԴ

Ս. ՍԻՈՒ ԵՒ ԸՆԿ.

(Ц. 4657) 51—40

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՐԱՔՍԻԱ

ԿԱՄ

ՎԱՐԾՈՒՀԻՆ

ԳՐԵՑ ՍԲՐՈՒՀԻ ՏԻՒՍԱՆ

Բիւզանդեան գրատան խնամօք ի լոյս ընծայուած սոյն հետաքրքրաշարժ վէպն որ ժամանակիս հրատապ խնդիրներէն միոյն, այն է, իգական սեռի իրաւանց պաշտպանութեան և անոնց հետ հաւասարութեան գեղեցիկ սկզբունքը կը ջատագովէ, նպատակ ունենալով գլխաւորաբար աշխատութեան սէրը արծարծել կանանց սեռի ամեն դասի մէջ, արժանի է ստուգիւ ամեն ընթերցող հայուն խորհրդածութեան և ուսումնասիրութեան։

Կը վաճառուի Թիֆլիսի մէջ Կեդրոնական գրավաճառանոցը ինչպէս և Զաքարիա Երիզորեանցի գրատունը։

(Ա.) 5—1

ОТКРЫТА ПОДПИСКА

НА 1887 ГОДЪ

НА ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКУЮ ГАЗЕТУ

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

(IV ГОДЪ ИЗДАНІЯ).

Выходитъ ежедневно, въ **Тифлисѣ** подъ редакціей **А. В Степанова.**

ПОДПИСНАЯ ЦѢНА: за годъ 10 р., за полгода 6 р , за 3 мѣсяца 3 р. 50 к. и за мѣсяцъ 1 р. 50 к.

Подписка принимается и гг. иногородные адресуются: *Тифлисъ, контора редакціи „Новаго Обозрѣнія“, Головинскій проспектъ, домъ № 7.*

3—2

Պատիւ ունիմ յայտնելու մեծ. պ. պ. հեղինակներին և թարգմանիչներին, որոնք դիմում են ինձ իրենց հրատարակած գործերը վաճառելու, որ անձնական զրազմունքներիս և տարաբնեան ծանրութեան պատճառով անկարող եմ կատարելու նրանց խնդիրը։ Ուստի արդէն ուղարկուածները յանձնելով գրավաճառ պ. Մարգիս Շիրազեանցին, որ մի վստահելի անձն է, խնդրում եմ, որ այսուհետև նրան դիմեն։

Թ ո փ չ ի ՈՒԼՍԱՆԴՐ ՆԱՋԱՐԵԱՆՑ

3—3

ГОДЪ V. ГОДЪ V.

ВЪ ГОРОДѢ КАРСѢ.

ВЪ КАНЦЕЛЯРІИ ВОЕННАГО ГУБЕРНАТОРА

КАРССКОЙ ОБЛАСТИ

ОТКРЫТА ПОДПИСКА

НА ГАЗЕТУ

„КАРСЪ“

НА БУДУЩІЙ 1887 ГОДЪ.

Газета „Карсъ“ въ 1887 году будетъ издаваться на тѣхъ-же основаніяхъ, какъ и въ текущемъ году, по той-же програмиѣ и тою-же редакціею.

УСЛОВІЯ ПОДПИСКИ:

Съ доставкою и пересылкою въ годъ три рубля, за четыре мѣсяца одинъ рубль.

Подписка принимается въ Редакціи газеты „Карсъ“, куда адресуютъ свои требованія и иногородные.

Газета «КАРСЪ» имѣетъ ближайшею цѣлью всестороннее изученіе Карсской Области и распространеніе въ обществѣ вѣрныхъ и точныхъ свѣдѣній, какъ о нынѣшнемъ ея состояніи, такъ и мѣропріятіяхъ, направленныхъ къ ея благоустройству. Цѣль эта можетъ быть достигнута въ той мѣрѣ, въ какой лица, имѣющія, по своему положенію, возможность собирать свѣдѣнія по тѣмъ, или другимъ вопросамъ, касающимся Области, ея населенія и расположенныхъ въ ея предѣлахъ частей войскъ, выразятъ свое сочувствіе газетѣ и пожелаютъ оказать ея редакціи просвѣщенное свое содѣйствіе сообщеніемъ имѣющихся въ ихъ рукахъ свѣдѣній и матеріаловъ; а потому редакція убѣдительно проситъ этихъ лицъ не отказать ей въ своемъ участіи.

3—2

Дозволено цензурою. Тифлисъ, 15-го Декабря 1886 г. Տպարան Ա. Պ. Գօհինեանց Типографія М Д. Ротиніанцъ Гол. пр., д. № 41